ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	Առաջարկի անվանումը	Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	Առաջարկի կարգավիճակը • *Ընդունվել է* • *Մերժվել է*	Մերժման դեպքում՝ հիմնավորումը
1.	***Կինոթատրոն***	*Աբովյան քաղաքի բանուկ հատվածներից մեկում կառուցել կինոթատրոն, կլոր շենքով բաղկացած 3 դահլիճներից: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է (կմիավորվի նմանատիպ մեկ այլ առաջարկի հետ)*	*Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը:*
2.	***Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի վերանորոգում***	*Վերանորոգել գործող կենտրոնը հետագա գործունեության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Ընդունվել է*	---
3.	***Ֆուտբոլի մարզադաշտ Արամուս գյուղում***	*Ֆուտբոլով զբաղվելու և մարզվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է*	*Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել համապատասխան տարածքի բացակայությամբ պայմանավորված:*
4.	***Մանկական խաղահրապարակ Արամուս գյուղում***	*Ստեղծել մանկական խաղահրապարակ երեխաների ակտիվ ժամանցի կազմակերպման համար: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է*	*Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել համապատասխան տարածքի բացակայությամբ պայմանավորված:*
5.	***Կոնֆերանս դահլիճի կառուցում Աբովյան քաղաքում***	*Կնպաստի համայնքի աշխուժացմանը և զարգացմանը: Կարող է տարածքը տրամադրվել նաև վարձակալությամբ՝ ապահովելով շահույթ: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Ընդունվել է*	---
6.	***Կացարանների կառուցում թափառող կենդանիների համար***	*Թափառող կենդանիների քանակը կրճատելու համար առաջարկվում է կառուցել կացարան: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Ընդունվել է*	---
7.	***Համայնքային կինոթատրոն***	*Ստեղծել համայնքում կինոթատրոն, որը կակտիվացնի բնակչության մշակութային կյանքը: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է (կմիավորվի նմանատիպ մեկ այլ առաջարկի հետ)*	*Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը: Քաղաքացու կողմից նշված տարածքը չի համապատասխանում ստանդարտներին:*
8.	***«Սպորտ համալիրի» կառուցում Բալահովիտ գյուղում***	*Երիտասարդների մարզական կյանքն աշխուժացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է*	*Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել համապատասխան տարածքի բացակայությամբ պայմանավորված:*

9.	***Վերին Պտղնի բնակավայրի գետնանցումի և հարակից կանգառների վերանորոգում***	*Մ4 միջպետական ճանապարհի Վերին Պտղնի գյուղի տարածքում գտնվող գետնանցումի և կանգառների հիմնանորոգում: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է*	*Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում չի գտնվում:*
10.	***Աբովյան համայնքում արևային կայանների տեղադրում***	*Աբովյան համայնքում տեղադրել արևային կայաններ համայնքային ենթակայության կառույցների կողմից սպառած էլեկտրաէներգիայի ծախսի կրճատման համար: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Ընդունվել է*	---
11.	***Գեղաշեն բնակավայրից դեպի սարատեղի, խոտհարքեր և վարելահողեր տանող ճանապարհների հարթեցում***	*Գեղաշեն բնակավայրից դեպի սարատեղի, խոտհարքեր և վարելահողեր տանող ճանապարհների հարթեցումը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը և դեպի Աժդահակ զբոսաշրջային հոսքերի աճին: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Ընդունվել է*	---
12.	***«Կամարիս գյուղի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում***	*Ծրագիրը կնպաստի գյուղում մշակույթային կյանքի ակտիվացմանը: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է*	*Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը:*
13.	***Զբոսայգու կառուցում Կամարիս գյուղում***	*Կնպաստի բնակավայրում բնակիչների ազատ ժամանցի կազմակերպմանը: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Ընդունվել է*	---
14.	***Կինոթատրոնի կառուցում***	*Ստեղծել համայնքում կինոթատրոն, որը կակտիվացնի բնակչության մշակութային կյանքը: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Ընդունվել է (կներկայացվի մյուս երկու ծրագրերի հետ համատեղ)*	---
15.	***Համայնքային ստեղծարար կենտրոնի կառուցում Առինջ գյուղում***	*Առաջարկի նպատակն է ստեղծել համայնքային ստեղծարար կենտրոն Առինջ գյուղում՝ բնակիչների կյանքի որակի բարելավման, սոցիալական ներառման խթանման և համայնքի զարգացման համար: Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ նշված չեն:*	*Մերժվել է*	*Իրականացման բյուջեն գերազանցում է ավագանու հատկացրած սահմանաչափը:*